

# ՖՈՒՆԴԻՄԵՆՏԱԿԱՆ ՆԱԿԱՄՈՒՐԱ

ԳՐԱՎԱՆԱՀԱՄԱՐԸ

ՎԵԱ

ԹԱՐԳՄԱՆԻՑ՝

ԱԼԵՔՍԱՆԴՐ ԱՂՋԱԲԵԿՅԱՆ

Փ

ԳԻՏԱՆՔ  
ԵՐևան 2017



Publication of this book was  
supported by Japan Foundation

## Նակամուրա, Ֆումինորի

Գրպանահատը, Եր.: Գիտանք, 2017, 100 էջ

Նա միայնակ է. ոչ ընտանիք ունի, ոչ ընկեր: Շրջում է Տոկիոյի ամբոխում, ընտրում է հարուստ տեսք ունեցող տղամարդկանց և աննկատ զրկում դրամապանակներից: Բայց այդ միապատճաղ կյանքն ավարտվում է, եթե նրա ճակատագրին խառնվում է ճապոնիայի ամենազոր հանցագործ խմբավորումը՝ յակուզան:

Դեղինակը ստեղծել է նրբագեղ ու տիսուր վեպ, որը հավասարապես տպավորել է քրեավեպի ու գրական վեպի ընթերցողներին բազմաթիվ երկրներում: Պարզ, գրավիչ և արագ ընթերցվող քրեավեպի տեսքով գրված այս գրական վեպը նաև հնարավորություն է տալիս գաղտագողի հայացք նետել Տոկիոյի ժամանակակից քրեական աշխարհին:

Ֆումինորի Նակամուրան բազմաթիվ ազգային ու միջազգային գրական մրցանակների դափնեկիր է: Դրանցից ամենահեղինակավորներն են՝ 2005 թվին ստացված Akutagawa Prize մրցանակը և այս վեպի համար 2010 թվին ստացված Oe Kenzaburo Prize մրցանակը: Ճապոնիայում վաճառվել է «Գրպանահատը» վեպի ավելի քան 250 հազար օրինակ: Վեպը թարգմանվել է տասներկու լեզվով՝ ներառյալ անգլերեն և ֆրանսերեն:

ISBN 978-9939-810-39-3

*SURI* by Fuminori Nakamura  
Copyright © 2009 Fuminori Nakamura  
All rights reserved.

Original Japanese edition published by KAWADE SHOBO SHINSHA Ltd. Publishers.  
This Armenian edition is published by arrangement with KAWADE SHOBO SHINSHA Ltd.

Publishers, Tokyo in care of Tuttle-Mori Agency, Inc., Tokyo  
Translation copyright © 2012 by Satoko Izumo and Stephen Coates  
© Գիտանք, թարգմանության և ձևավորման համար, 2017

Երեխա ժամանակ ես հաճախ էի ծախողում:

Մարդաշատ խանութերում, այլ նարդկանց տներում թաքրուն վերցրած իրերը դուրս էին սահում մատներից: Ուրիշներին պատկանող առարկաները ասես օտար էին և հարմար չէին տեղափորփում ին ձեռքբերում: Հաստատելով իրենց անկախությունը՝ թերևակի թարտում էին, կենդանանում ու ընկնում հատակին, նախքան հասցնում էի մի բան անել: Գործողության նպատակը, որը էությանը անբարոյական էր, ասես խանգարում էր ինձ: Իսկ հեռվում միշտ աշտարակն էր: Մշուշում սավառնող լոկ ուրվապատկեր էր, որը նման էր վաղեմի ցնորդի: Բայց այժմ նման սխալներ ես չեմ անում: Եվ բնականաբար այլևս չեմ տեսնում աշտարակը:

Վաթսուն անց մի տղամարդ քայլում էր ին առջևից կառամատույցի կողմը. հագին սև վերնազգեստ էր, աջ ձեռքին՝ արծաթագույն ճամպրուկ: Յամողված էի, որ այստեղի բոլոր ուղևորներից նա ամենահարուստն է: Բրումելով Կուչիմելիի վերաբերուվ էր և նույն մակնիշի պաշտոնազգեստով: Մաշվածության նշույլ իսկ չկար հավանաբար պատվերով կարված նրա թեղուտի մակնիշի կոչիկներին: Նրա ունեսորությունը ակնհայտ էր շրջապատի ամեն մի մարդու: Զախ ձեռքի թեքածալից ծիկրակող արժաքե ժամացույցը Ռուսական Շերտար էր: Տղանարդը տոմս գնելու որոշ դժվարություն ուներ, քանի որ սովորություն չուներ ինքնուրույն նստելու ճեղընթաց գնացքը: Նա առաջ թերվեց, հաստ մատները վարանելով ճախրում էին տոմսի վաճառասարքին՝ զզվելի թրթուրների պես: Այդ պահին տեսա նրա դրամապանակը բաճկոնի առջևի ձախ գրպանում:

Յեռու մնալով՝ կանգնեցի շարժասանդուղքին ու անշտապ իջա: Լրագիրը ձեռքին կանգնեցի նրա հետևում այնտեղ, որտեղ նա սպասում էր գնացքի ժամանելուն: Սիրոս մի քիչ արագ էր զարկում: Ես գիտեի անվտանգության բոլոր տեսախցիկների տեղը այս կառամատույցին: Քանի որ միայն կառամատույցի տոմս էի գնել, պետք է ավարտեի գործը մինչև նրա գնացք նստելը: Մեջքով փակեցի աջ կողմին մարդկանց տեսադաշտը, լրագիրը ծալեցի ու վերցրի ձախ ձեռքով: Յետո դանդաղ հջեցրի՝ քող ստեղծելով, և սահեցրի աջ ցուցանատն ու միջամատը նրա վերաբերուի գրպանը: Ցերեկային լամպի լույսը թույլ առկայթեց նրա թեքածալի կոճակին և սահեց տեսադաշտին եզրով: Զգուշորեն շունչ առա ու պահեցի, բռնեցի դրամապանակի ծայրը և դուրս քաշեցի: Մատներին ծայրից սարսուռ անցավ ուսիս, և տաքության զգացողությունը դանդաղ տարածվեց մարմնովս մեկ: Ինձ թվում էր, թե կանգնած

Եմ դատարկությունում, և չնայած շրջապատի մարդկանց բազում հաստվող հայացքներին՝ դրանցից ոչ մեկը ինձ չէր ուղղված: Պահպանելով մատներիս փխրուն հպումը դրամապանակին՝ օգեցի դա ծալված լրագրի ծալքը: Յետո լիազիրը տեղափոխեցի աջ ձեռքս ու դրեցի վերարկուիս ներսի գրպանը: Դանդաղ արտաշնչեցի՝ գիտակցելով, որ ջերմաստիճանս շարունակում է բարձրանալ: Ստուգեցի շրջապատը՝ լոկ շարժելով աչքերս: Մատներս դեռ լարված էին արգելված առարկային դիպչելուց: Մեջքովս քրտինք ծորաց: Յանեցի բջջախոսն ու ձևացնելով, թե ստուգում եմ էլփոստը, հեռացաւ:

Վերադառնալով մուտքի սրահ՝ մոխրագույն աստիճաններով իջա Մարունուչի գիծը: Յանկարծ աչքերից մեկը մշուշվեց, և շուրջս շարժվող բոլոր մարդիկ կարծես սկսեցին ցոլալ, նրանց ուրվագծերն աղավաղվեցին: Յանելով կառամատույցին՝ աչքի պոչով նկատեցի սև պաշտոնազգեստով մի տղամարդու: Նրա տաքաստի հետևի աջ գրպանի թերթ ուռուցիկությունը ինձ հուշեց դրամապանակի տեղը: Տղամարդու տեսքից ու շարժուձևից ենթադրեցի, որ նա ուղեկցող տղամարդ է կանանց ակումբում: Յարցական նայում էր բջջախոսին, բարակ մատներն աշխուժողեն շարժվում էին ստեղնաշարին: Նրա հետ նստեցի գնացք՝ հետևելով ամբոխի շարժմանը, և հեղձուկ կառքում տեղակայվեցի նրա հետևում: Երբ մարդու ջղերին միաժամանակ ազդում են թույլ և ուժեղ գրգռիչներ, նա անտեսում է թույլը: Ուղու այս հատվածում կար երկու երկար ոլորան, որտեղ գնացքը ուժգին թափահարվում էր: Իմ հետևում կանգնած գրասենյակի աշխատողը կարդում էր մի քանի անգամ ծալված երեկոյան թերթը. աջ կողմում երկու միջին տարիքի կին բամբասում էին ինչ-որ մեկից ու հրահում: Միակ կեղծ ուղևորը ես էի: Շրջած ափս ուղելով դիմացինի կողմը՝ երկու մատով բռնեցի նրա դրամապանակը: Մյուս ուղևորները երկու կողմից պատ էին կազմել շուրջս: Նրա գրպանի մաշված անկյունից երկու թել կախվել էին ու ոլորվել օձերի պես՝ նրբագեղ պարույր կազմելով: Երբ գնացքը ճոճվեց, ես առաջ մղվեցի՝ իբր հենվելով նրա մեջքին, և ուղղաձիգ շարժումով վեր քաշեցի դրամապանակը: Ներսիս ճնշումը դուրս ծորաց: Արտաշնչեցի, և մարմնովս հանգստացնող ջերմություն տարածվեց: Առանց շարժվելու, ստուգեցի կառքի մբնոլորտը, բայց ամեն ինչ կարգին էր: Չէի կարող սխալվել նման հեշտ գործ անելիս: Յաջորդ կայարանում դուրս եկա ու հեռացա՞ մրտող մարդու պես կուչ ածելով ուսերս:

Միացա հոգնած մարդկանց հոսքին և անցա արգելափակոցի միջովք: Նայելով կայարանի առաջ հավաքված մոտ տասնինգ տղամարդկանց ու կանանց ինմբին՝ ենթադրեցի, որ այդտեղ մոտ երկու հարյուր հազար ինն կա: Եվ գլանակ վառելով՝ հեռացա: Էլեկտրասյան հետևում, իմ ծախ կողմում տեսա մի տղամարդու, որը անթաքույց ստուգեց իր դրամապանակի պարունա-

կուրեյունը և դա դրեց սպիտակ փետրաբաճկոնի աջ գրպանը: Նրա թկածալերը մգացել էին թօրից, մարզակոշիկները մաշված էին, լավորակ էր միայն ջինս տարատի գործվածքը: Ես անտեսեցի նրան և մտա Միցուկոսի հանրախանութ: Տղամարդկանց հագուստի հարկում, որտեղ հանրահայտ մակնիշների բազում խանութներ կային, մարդատիկնիկի հագին ներկայացված էր ներդաշնակ կոչվող հագուստ, որը կարող էին կուլ երեսնամյա կամ թիզ ավելի մեծ բավական հարուստ տղամարդիկ: Ես և տիկնիկները նույնանձնան հագուստով էինք: Յագուստը ինձ չէր հետաքրքրում, բայց իմ գործով զբաղվողը չէր կարող տարբերվել մյուսներից: Պետք է ունեսոր տեսք ունենաս, որպեսզի ոչ ոք քեզ չկասկածի: Պետք է ունենաս խարուսիկ արտօքին, ներդաշնակ կերպով խառնվես շրջապատին: Միակ տարբերվող բանը իմ ու խանութի տիկնիկների կոշիկներն էին: Յաշվի առնելով, որ գուցե վազելով փախչելու կարիք լինի, ես մարզակոշիկներով էի:

Խանութում տաք էր, և ես թուլացրի մատներս՝ ձեռքերս բացելով ու փակելով գրպանում: Թաշկինակը, որով թքում էի մատներս, դեռ սառն էր: Ցուցանատս ու միջամատը գրեթե նույն երկարությունն ունեին: Զգիտեմ՝ դա բնածին էր, թե դրանք կամաց-կամաց էին հավասարվել: Նրանք, ում մատնեմատը ավելի երկար է, քան ցուցանատը, օգտագործում են միջամատն ու մատնեմատը: Ոնանք բռնում են երեք մատով՝ միջամատը հետևում: Ցանկացած շարժում անելը ունի իր սահուն, կատարյալ եղանակը: Դրամապանակը գրպանից հանելը՝ նույնպես: Կարևոր ոչ միայն հանելու անկյունն է, այլև արագությունը: Իսիգավան շատ էր սիրում խոսել դրա նասին: Գինովցած՝ նա հաճախ դառնում էր երեխայի պես անզգույշ ու շատախոս: Զգիտեի, թե հիմա նա ինչ է անում: Ենթադրում էի, որ հավանաբար արդեն մեռած է:

Ստա հանրախանութի թույլ լուսավիրոված գուգարանի խցիկը, մի գույգ բարակ ձեռնոց հագցրի մատներիս և գննեցի դրամապանակները: Որպես կանոն՝ անվտանգության նկատառումներով ես երեք չեմ օգտագործում կայարանի գուգարանը: *Բրումելո Կուչինելիի* հագուստով տղամարդու դրամապանակում գտա 96000 իեն, երեք ամերիկյան հարյուր դոլարանոց, Վհզա ոսկի քարտ, *Ամերիքան էքսպրես* ոսկի քարտ, վարորդի վկայական, մարմնամարգության ակումբի անդամի քարտ և 72000 իենի ստացական քարձորակարգ ճապոնական ճաշարանից: Արդեն ավարտում էի զննումը, երբ նկատեցի մի խայտաբղետ քարտ, որին ոչինչ չկար: Նախկինում տեսել էի նման քարտ: Փակ մասնավոր պոռնկատան քարտ էր: Ուղեկցորդի դրամապանակում 52000 իեն կար, վարորդի վկայական, *Միցուի Սոլմիմուտ* վարկաքարտ, Ցուտայա տեսաերիզների խանութի և նկարապատումների գրախանութ-սրճարանի քարտեր, սեռառլորտի մի քանի աշխատողի այցեքարտ և բազմաթիվ

անպետք թրեեր, ստացականներ ու նման բաներ: Նաև մի քանի գունավոր հար կար՝ դրոշմված սրտիկներով ու աստղերով: Ես վերցրի միայն թղթադրամները՝ մնացածը թողնելով տեղում: Դրամապանակը բնութագրում է անձին ու նրա կենսակերպը: Բջջախոսի պես է տիրոջ գաղտնիքների կենտրոն է, որը միշտ նրա հետ է: Ես երբեք չեմ վաճառում քարտերը. մեծ գլխացավանք է: Անում եմ այն, ինչ կաներ Խսիքավան. դրամապանակը գցում եմ փոստարկող, փոստի ծառայությունը հանձնում է դա ստիկամությանը, որը վարորդի վկայականի հասցեով վերադարձնում է տիրոջը: Սրբեցի մատնահետքերս և դրամապանակները դրեցի գրպան: Ուղեկցորդ տղանարդուն կարող էին ձերբակալել թմրանյութի համար, բայց դա իմ խնդիրը չէ:

Խցիկը լքելիս մի տարօրինակ բան զգացի վերարկուիս գաղտնի գրպաններից մեկում: Տագնապահար վերադարձա խցիկ: Կոշտ կաշվից պատրաստված Բուլզգարի դրամապանակ էր: Ներսը 200000 իեն կար՝ նոր թղթադրամներով: Եվ մի քանի ոսկի քարտ՝ Վհցա և այլ, նաև բաժնետոմսի առջուվաճառքով գրաղվող ձեռնարկության նախագահի գործարար այցեքարտեր:

Նորից, մտածեցի: Զի հիշում, թե որտեղից է: Բայց այս մեկը այդ օրը ձեռք բերած բոլոր դրամապանակներից ամենաարժեքավորն էր:

## 2

Թեթև գլխացավ էի զգում՝ օրորվելով լեփ-լեցուն գնացքում, որն ուղևորվում էր Հանեդա օդակայան: Ձեռուցումից և մարդկանց մարմինների չերմությունից քրտնել էի: Դուրս էի նայում լուսամուտից՝ մատներս շարժելով գրպանում: Գորշ շենքերի խմբերը ինչ-որ ծածկագրի պես անցնում էին կանոնավոր ընդմիջումներով: Հանկարծ հիշեցի նախորդ օրը վերցրած վերջին դրամապանակը: Աչքերս թարթեցի, և իմ առջևով մի երկարե հսկա աշտարակ անցավ՝ բաձր աղմուկ հանելով: Դա ընդամենը մեկ ակնթարթ տևեց, բայց մարմինս քարացավ: Աշտարակը բարձր էր. Ես լարված կանգնած էի լեփ-լեցուն կառքի մեջտեղում, և ինձ թվաց, թե զգացի դրա անցողակի հայացքը:

Շուրջս նայելով՝ տեսա մի տղամարդու, որը կարծես ամբողջովին կլանված էր ինչ-որ բանով: Վերացած վիճակում չէր, բայց աչքերը կիսափակ էին, մինչդեռ նա շոյում էր դիմացի կնոջ մարմինը: Կարծում եմ, որ նման տղամարդիկ լինում են երկու տեսակի՝ այլասերված հակումներով սովորական մարդիկ և նրանք, ովքեր այնքան են համակված այլասերությամբ, որ երևակայության և իրականության սահմանները լողովում են, իսկ հետո լորիվ վերանում: Ենթադրեցի, որ նա երկրորդ խմբից է: Հետո հասկացա, որ զոհը

կրտսեր դպրոցի աշակերտուհի է, և ամբոխի միջով նոտեցա նրանց: Երեքից բացի, ոչ ոք ոչինչ չնկատեց:

Յետևկից ծախ ծեռքով աննկատ ճանկեցի տղամարդու ծախ դաստակը: Նրա բոլոր մկանները հանկարծ լարվեցին, հետո զգացի, որ նա թուլացավ՝ կարծես ուժեղ ցնցում ապրելուց հետո: Դաստակը բաց չքոնցելով՝ ցուցանատով բռնեցի նրա ժամացույցը, բբամատով քանդեցի գոտիկի ճարմանդն ու սահեցրի ժամացույցը թերիս ներսը: Յետո աջ ծեռքի մատներով բռնեցի դրամապանակը նրա բաճկոնի ծախ ծոցագրպանում: Խուսափելով դիպչել նրա մարմնին՝ փոխեցի շարժումն, զցեցի դրամապանակը նրա բաճկոնի ու վերնաշապակի միջով և ծախ ծեռքով բռնեցի ներքենում: Քառասունին մոտ այդ տղամարդը ինչ-որ ընկերության աշխատող էր, իսկ ծեռքի մատանին վկայում էր, որ ամուսնացած է: Նորից բռնեցի նրա թեր՝ այս անգամ աջ ծեռքով: Նա սփրբնել էր և փորձում էր դեմքով ինձ շրջել՝ պատելով պարանոցը և երերակով գնացքի շարժումից: Աղջիկը զգաց փոփոխությունը իր հետևում և անվտահ շարժեց գլուխը, տարակութելով՝ շրջվի թե ոչ: Կառքում լրություն էր: Տղամարդը բաց արեց բերանը՝ փորձելով մի բան ասել, ասես ուզում էր արդարանալ իմ կամ աշխարհի առաջ: Կարծես մի շարակամ լուսարձակ նրան ի ցույց էր դրել: Կոկորդը թրթաց. թվում էր, թե նա պատրաստվում է գոռալ: Այսերով ու ճակատով քրտինք էր ծորում, աչքերը չովել էին, բայց հայացք կենտրոնացած չէր: Ճավանաբար իմ դեմքին նույն արտահայտությունը կլիներ, երբ ես բռնվեի: Թուլացրի ծեռքիս սեղմումը նրա թերին և ասացի՝ գնա: Դեմքը ծոնոելով՝ նա վարանում էր: Գլխով ցույց տվեցի դուռը: Նրա թերը դոդում էին, նա շրջվեց՝ ասես նոր հասկանալով, որ իրեն եմ նայում: Դուռը բացվեց, և նա դուրս վագեց: Միարձվեց ամբոխի մեջ՝ մարդկանց հրմշտելով ու մի կողմ հրելով իր ճանապարհից:

Կառքում աշակերտուհին սեռվել էր ինձ: Ես շրջվեցի՝ փորձելով ճնշել զգվանքս: Վերցրել էի ժամացույցը, որ ինձ պետք չէր, դրամապանակը, որ ինձ պետք չէր, և երկուսն էլ՝ տղամարդն ու աղջիկը, տեսել էին դեմքս: Բայց պարզ էր, որ տղամարդը չի կարող ինձ մեղադրանք ներկայացնել:

Կատարվածը ինձ այլս չէր հետաքրքրում, և հաջորդ կանգառին ես դուրս եկա: Շարժասանդուղքին նկատեցի միջին տարիքի մի տղամարդու ինքնագոհ դեմքը, բայց կայարանից դուրս եկա ու կանգնեցի կեղտոտ պատի մոտ: Լարվածությունը աստիճանաբար լրում էր մարմինս: Տաքացրի ծեռքերս գրպանում, որոշեցի տաքսի նստել:

Զգացի ինչ-որ մեկի ներկայություն և, շուրջս նայելով՝ տեսա նիհար երիտասարդի, որը իմ կողքին հենվել էր պատին: Սև պաշտոնազգեստով էր, որի մակնիշը չճանաչեցի, և սև կոշիկներով, որի մակնիշը նույնպես չճանաչեցի:

**Թացիրանան է, մտածեցի:** Կանկարծակի եկած՝ խուճաայի մատնվեցի և ջանացի վերահսկել ինձ: Նրա շիկահեր մազերը այժմ ներկված էին շագանակագույն: Աչքերը կկողած՝ նա սկսովեց ինձ ու ծռեց հաստ շուրթերը: Երկի դրա ժայխտ էր, թեև վստահ չէի:

- Կարծում էի՝ թիրախտ միայն հարուստներն են, - ասաց և մարմնով ինձ դարձավ...

### 3

Մահճակալին պառկած՝ չէի կարողանում քնել: Բաց արեցի աչքերս: Անձրևը տիհած թխկրխսկոցով գարկում էր բարակ պատուհաններին: Վերևի բնակարանից համաշափ, թավ դմփդմփոց էր լսվում: Մերթ ընդ մերթ ձայնը դադարում էր, իետո նորից էր սկսվում, էլի ու էլի: Ես լրիվ արթուն էի, հստակ տեսնում էի ներքնահարկի սենյակիս բոլոր առարկաները: Անձրևը անհողդող էր թվում. ընկնում էր երկնքից, որպեսզի հեղեղի ինձ շրջապատող աշխարհը:

Վերևի համաշափ դմփդմփոցը դադարեց. լսվում էր լոկ անձրևի աղմուկը: Քանի որ երաժշտությունը չվերսկսվեց, ենթադրեցի, որ վերևի բնակիչը քնել է: Ինձ թվաց, թե աշխարհում մնացած միակ մարդն եմ: Գլանակ վառեցի, հետո տեսա, որ ևս մի կիսատը դեռ մոխրամանում է: Բնակարանում դիտաժան բան չկար՝ ընդամենը խողովակաշեն մահճակալ, գուգարան ու արդուկելու տախտակ: Արիեստական մանրաթելերը դուրս էին եկել իմ մաշված ներքնակից՝ քրքրված տատամիի անցքերից ցցված ձողիկների պես: Սևեռվեցի երկար մատներիս, բազմիցս աշխատեցրի՝ փակելով ու բացելով: Փորձեցի իհշել, թե առաջին անգամ երբ հասկացա, որ հավասարապես օգտագործում ես աջ և ձախ ձեռքերս, բայց չկարողացա: Թվում էր, թե ունակությունս ի ծնե է, բայց նաև հնարավոր էր, որ աստիճանաբար էր զարգացել:

Անձրևը շարունակվում էր, ասես որոշել էր ինձ խանգարել՝ դուրս գալու տնից: Դիտեցի անծայրածիր ամպերը երկնքում և այն տեղը, որտեղ այս պահին էի: Անհնազանդություն արտահայտելով՝ ճանկեցի գլանակի տուփը, հագա կիսագուլպաներս, բացեցի խախտւ փայտե դուռն ու դուռս եկա: Անձրևը թրծել էր բնակելի շենքի ժանգու սյուները, կողքին դիակի պես ընկած հեծանիվը և ավելի էր սարեցրել սառը օդը:

Դակված ճանապարհային նշանի մոտ շրջանցեցի անկյունը, անցա ժանգու աստիճաններով գործարանի կողքով և շենքերի շարքի վերջում եռակողմ խաչմերուկին թեքվեցի ձախս: Ընթացքն արագացնելով՝ ինձ էր մոտենում մի ինքնաշարժ: Կռահեցի, որ կզիջի ճանապարհը, և իհարկե, երբ ես առաջ գնացի, այն երկչուտ մի կողմ քաշվեց: Բազում հեռախոսասյուներից այն

կողմ անձրկը հարվածում էր վիթխարի աշտարակին: Չեռացրի հայացրս, թեն իհարկե գիտեի, որ այն այնտեղ է, նույնիսկ եթե չեմ նայում:

Յասնելով կայարան՝ տեսա որ անձրկը ողողում է առանց ուղևորի միայնակ տարսին: Վարդորը անտարբեր նայում էր իր առաջ, հայացքը սառել էր՝ սկզբան հեռուներին: Բարձրացա սանդուղքով ու փակեցի անձրևոցը: Անձրկից ու ցրտից պատսպարված մի տնազուրկ ներսը պառկած նայում էր իմ կողմը: Նա կարծես իր տանը լիներ, և կարծես բնական էր, որ այս ժամին այստեղ պետք է բափառաշրջիկ լինի: Նրա հայացքը ինձ հիշեցրեց Խիքավային, և ես հուզմոնը զգացի, բայց նրա դեմքն ու տարիքը այլ էին: Իրականում նա ինձ չէր նայում: Երբ մոտենում էի, նա ակնապիշ սկզբել էր մի կետի իմ հետևում, ասես այնտեղ մի բան կար: Գլանակ վառեցի՝ նրան մտքից հանելու համար, հատեցի երկարգիքը ու կիսաքանդ աստիճաններով իջա մյուս կողմից:

Պարենի խանութում էլի գնեցի գլանակ ու բաժակով սուրճ: Երբ վճարեցի, վաճառողը խենթի պես բղավեց՝ շատ շնորհակալ եմ: Վճարեցի այլասերվածից նախորդ օրը վերցրած թղթադրամով, որի նախկին տերերը անհայտ էին: Մտածեցի, որ թղթադրամը եղել է նրանցից յուրաքանչյուրի կյանքի մի պահի վկան: Գուցե եղել է սպանության վայրում, հետո մարդասպանից ինչ-որ տեղ անցել է մի խանութպանի, հետո էլ որևէ այլ տեղ՝ մի լավ մարդու:

Խանութից դուրս գալով՝ տեսա վերևում սավանող ծանր ամպերը, և ինձ թվաց, թե պատվիում եմ անձրկի անթիվ կաթիլներով: Զարկերակս արագացավ, և ես աշխատեցրի մատներս գրպանում: Պատկերացրի, որ տաքսի ես կանչում, գնում եմ մարդաշատ վայր և այնտեղ, տեղաշարժվելով ամբոխում, սահեցնում եմ մատներս մարդկանց գրպանները և մեկը մյուսի հետևից դրամապանակներ վերցնում՝ ձեռքերս հնարավորինս արագ ու ճշգրիտ շարժելով: Անձրկը շարունակվում էր, և զարկերակս չէր դանդաղում: Մտածեցի, որ դրա դեմն առնելու միակ միջոցը քաղաքի կենտրոն գնալն է, բայց հետո փորձեցի հանդարտվել: Նորից բարձրացա աստիճաններով՝ ինձ համոզելով, որ իմ հետևում անդադար հնչող ոտնաձայները լոկ արձագանք են, և նոր գլանակ վառեցի: Տնազուրկը ոչ մի տեղ չէր երևում: Սրտիս զարկերը խուլ էին ու ծանր, երբ ես հատեցի կայարանի սրահը և նորից ցած իջա: Անձրկանոցով մարդը թրջվում էր դիմացս շրջանաձև խաչմերուկին: անցնող ինքնաշարժի սպիտակ լուսարձակները լուսավորեցին մանր անձրկը՝ բոցավառելով սուր, ոսկեգույն կաթիլները: Անձրկը ասես բաղկացած էր հազարավոր ասեղներից: Նշմարեցի քնած տնազուրկ մարդու ուրվապատկերը, բայց անձրկանոցով մարդը այլևս չէր երևում:

Դադարեցի հետ նայել ուսիս վրայով՝ մտածելով, որ ավելի ճիշտ կլիներ մնալ տանը: Զգում էի աշտարակի գոյությունը, թեև չէի կարող դա տեսնել այստեղից: Զգում էի անվերջ անձրևը: Զգում էի վիթխարի ամպերը և գիտակցում էի, որ քայլում եմ դրանց տակ: